ՀԱՍՏԱՏՎԱԾ է
ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ
20.09.2022թ.

Ն. Զաքարյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՅՈ ՅԱՎՈՐՈՎԻ ԱՆՎԱՆ Հ. 131 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԴԱՍՂԵԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

VIII դասարան

2022 – 2023 ՈՒՍՏԱՐԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ

ԾՐԱԳԻՐ

Քաղաքի Երևանի Պ. Յավորովի անվան N131 հիմնական

դպրոցի VIII դասարանի

դասղեկ՝ Մ. Դարզիյան

2022 – 2023 ուստարի

ԿՐԹԱ_ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

VIII դասարանում սովորում են 27 աշակերտ՝ 14 տղա, 13 աղջիկ: Նրանք բոլորն էլ պարտաճանաչ աշակերտներ են: Բոլորն էլ ընկերասեր են և սիրում են ազատ ժամանակը միասին անցկացնել: Աշակերտներից ոմանք լավ ասմունքում են, ոմանք էլ՝ լավ երգում: Աշակերտների մի մասը սիրում է ազատ ժամանակն անցկացնել ընթերցանությամբ: Դասարանում իշ-խում է համերաշխությունը, հարգանքը միմյանց և ուսուցիչների հանդեպ:

2.Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

1. Ուշադրություն դարձնել դասարանական կոլեկտիվի համախմբմանը:
2. Ապահովել անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող և ներուժը բացահայտող հոգեբանա- մանկավարժական միջավայր:
3. Ձևավորել բարյացակամ, ներդաշնակ փոխհարաբերություններ սովորողների, սովորողներին մանկավարժների միջև:
4. Ձևավորել առողջ ապրելակերպի վարքագիծ:
5. Դաստիարակել հայրենասիրություն, հարգանք մեծերի հանդեպ:
6. Ի հայտ բերել աշակերտների նախասիրությունները և ընդգրկել նրանց հասարակական աշխատանքներում:
7. Օգնել աշակերտներին զարգացնելու սեփական կարողություններն ու հմտությունները,ինչը կնպաստի նրանց՝ հետագայում հասարակության մեջ արդյունավետ ինտեգրմանը:

3.Հայեցի դաստիարակություն

Հոգևոր դաստիարակություն

Անհրաժեշտ է ձևավորել անձ, ով գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության,

արվեստի, ավանդույթների , ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը, գիտակցի,որ գիտությունը, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում:

Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների մեջ ձևավորել գեղագիտական ճաշակ: Աշակերտը պետք է կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը: Կազմակերպել էքսկուրսիաներ, որոնք կնպաստեն աշակերտների գեղագիտական դաստիարակությանը:

Ռազմա – հայրենասիրական դաստիարակություն

Ձևավորել քաղաքացի, ով հարգի Հայաստանի պետական խորհրդանիշ.-ը, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը:

Ֆիզիկական դաստիարակություն

Կազմակերպել աշակերտների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ: Աշակերտը պետք է մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը:

Աշխատանքային դաստիարակություն

Ձևավորել անձ, ով դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը:

Բնապահպանական դաստիարակություն

Դաստիարակել սեր հայրենի բնության հանդեպ: Ձևավորել անձ, ով գիտակցի բնության պահպանման, շրջակա միջավայրի չաղտոտման կարևորությունը:

Դպրոց – ընտանիք կապը

Սերտ կապ պահպանել ծնողների հետ, նրանց մասնակից դարձնել դպրոցի աշխատանքներին: Աշակերտը պետք է գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակու- թյան մեջ, դրսևորի արժանավայել պահվածք, գիտակցի ծնողների և համայնքի նկատմամբ հարգանքի

դրսևորման կարևորությունը:

ՈՒՍՈՒՄՆԱ - ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումն. շաբաթ.	**Ուսումնա-դաստիարակչական աշխատանքներիբովանդակությունը** /առաջին կիսամյակ - 13 շաբաթ/	**Կատարողներ**
1	Կահավորել դասարանը: Ստեղծել դասարանական անկյուն:Ընտրել դասարանի ավագ: Համաճարակային իրավիճակով պայմանավորված՝ կարգապահական նոր կանոնների ծանոթացում:Ծանոթացում դպրոցի տարհանման պլանին:	Դասղեկ աշակերտներ
2	Աշակերտի պահվածքը տանը և դպրոցում:Հարգանք մեծերի հանդեպ: Զրույց՝ նվիրված ՀՀ անկախության տարեդարձին:	Դասղեկ աշակերտներ
3	Աշակերտների կարգապահությունը: Զրույց՝ <<Իմ ուսուցիչը>> թեմայով:	Դասղեկ աշակերտներ
4	Ազնիվ ու անկեղծ հարաբերություններ դասարանում:Աշակերտ. կոլեկտիվի համախմբումը:	Դասղեկ աշակերտներ
5	Զրույց՝ <<Արցախյան հերոսամարտ >> թեմայով:	Դասղեկ աշակերտներ
6	Զրույց՝ <<Ինչպես եմ անցկացրել աշնանային արձակուրդներս>> թեմայով:	Դասղեկ աշակերտներ
7	Քննարկումներ աշակերտների հետ՝ դասարանի առաջադիմությունը բարձրացնելու շուրջ:	Դասղեկ աշակերտներ
8	Զրույց՝ <<Արդյո՞ք ամեն ինչ անում ես լավ սովորելու համար>>:	Դասղեկ աշակերտներ
9	Սերմանել սեր հայրենիքի նկատմամբ:	Դասղեկ աշակերտներ
10	Զրույց՝ <<Ի՞նչ անել երկրաշարժի ժամանակ>> թեմայով:	Դասղեկ աշակերտներ
11	Ինչպե՞ս եմ անցկացնելու ձմեռային արձակուրդներս:	Դասղեկ աշակերտներ
13	Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում:	Դասղեկ աշակերտներ
Ուսումն. շաբաթ	**Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը** /երկրորդ կիսամյակ - 21 շաբաթ/	**Կատարողներ**
14	Զրույց՝ << ՀՀ բանակի կազմավորումը>> թեմայով:Ֆիլմի դիտում ՝ << Հայոց բանակ>>:	Դասղեկ աշակերտներ
15	Զրույց՝ <<Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները>> թեմայով:	Դասղեկ աշակերտներ

16	Առնո Բաբաջանյան:Երաժշտության ունկնդրում: Ինչպիսի երաժշտություն եմ նախընտրում:	Դասղեկ աշակերտներ

17	Աշակերտների պատրաստվածությունը դասերին:	Դասղեկ աշակերտներ

18	Աշակերտների հետաքրքրություններն ու նախասիրությունները:Ինչպես են սիրում անցկացնել իրենց ազատ ժամանակը:	Դասղեկ աշակերտներ
19	Զրույց՝ <<Կրթության անհրաժեշտության և յուրաքանչյուր առարկայի կարևորության մասին>> թեմայով:	Դասղեկ աշակերտներ
20	Քննարկումներ աշակերտների հետ՝ դասարանի առաջադիմությունը բարձրացնելու շուրջ:	Դասղեկ աշակերտներ
21	Աշակերտների մասնակցությունը և պատրաստվածությունը դասերին:	Դասղեկ աշակերտներ
22	Հ. Շիրազ:Անցկացնել մրցույթ՝ << Լավագույն ասմունքող>>:	Դասղեկ աշակերտներ
23	Իմ մայրիկը…/ կնոջ դերը ընտանիքում…/:	Դասղեկ աշակերտներ
24	Ի՞նչ է ընկերությունը: Իմ ընկերները:	Դասղեկ աշակերտներ
25	Զրույց՝ <<Համակարգչի և բջջային հեռախոսների դերը մեր կյանքում>> թեմայով:	Դասղեկ աշակերտներ
26	Երկրներ, որտեղ կցանկանայի լինել…	Դասղեկ աշակերտներ
27	Իմ ընթերցած գրքերը…	Դասղեկ աշակերտներ
28	Ինչպիսին եմ պատկերացնում ապագաս:	Դասղեկ աշակերտներ
29	Մեր հայտնի մարզիկները:	Դասղեկ աշակերտներ
30	Պատմական ակնարկ՝ նվիրված Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին:	Դասղեկ աշակերտներ
31	Հաղորդումներ, որ նախընտրում եմ նայել/ ինչու՞/:	Դասղեկ աշակերտներ
32	Զրույց՝ <<Հաղթանակի և խաղաղության տոնը>> թեմայով:Մայիսյան հերոսամարտեր:	Դասղեկ աշակերտներ
33 34	Ի՞նչ եմ սովորել այս ուսումնական տարում: 2022– 2023 ուստարվա արդյունքների ամփոփում:Դասագրքերի հանձնում:	Դասղեկ աշակերտներ Դասղեկ աշակերտներ

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Շաբաթ	Թեմա	Ծանոթություն
1	Հակահամաճարակային կանոնների պահպանումը ուսուցման գործընթացում	
2	Փոխհարաբերությունները աշակերտների միջև	
3	Խտրականություն	
4	Իմ հայրենիքը	
5	Արցախյան հերոսամարտեր	
6	Շրջակա միջավայրի պահպանումը	
7	Համագործակցություն	
8	Արդյունավետ հաղորդակցում	
9	Խնդիրների համատեղ լուծում, որոշումների կայացում	
10	Կոնֆլիկտների հաղթահարում	
11	Հանդուրժողականություն	
12	Ընթերցանությունը իմ կյանքում	
13	Դ. Դեմիրճյանի <<Ավելորդը>>	
14	Մահաթմա Գանդի	
15	Մարտին Լյութեր Քինգ	
16	Աշխատանքը ազնվացնում է մարդուն	
17	Ինչպե՞ս հասնել հաջողության	
18	Ուսման նկատմամբ երեխայի հետաքրքրությունը	
19	Ինչպես հաղթահարել ծուլությունը	
20	Լավ և վատ բնավորություն	
21	Լավ և վատ սովորություններ	
22	Վատ սովորությունների հետևանքները	
23	Ինչ է ազնվությունը	
24	Իմ ընտանիքը: Ի՞նչ են պատմում ընտանեկան լուսանկարները	
25	Սիրո և հավատարմության մասին	
26	Ժպիտը մարդու կյանքում	
27	Եթե ես հրաշագործ լինեի…	
28	Մարդ, որին կուզեի նմանվել	
29	Հայտնի հայ մարզիկները	
30	Ցեղասպանության զոհերի հիշատակի օր	
31	Մեր երկրի հերոսական անցյալը	

32	Կարծրատիպեր և նախապաշարմունքներ	
33	Ուրիշներին ընկալելը	
34	Ի՞նչ տվեց ինձ այս ուսումնական տարին : 2022 – 2023 ուստարվա արդյունքների ամփոփում:	

Ծնողական ժողովներ Անցկացման օրը	Քննարկվող հարցեր	Ժողովի համառոտ բովանդակությունը	Ծանոթություն
14. 09.2022 թ.	1. Ծնողական խորհրդի Ընտրություն 2. Դասագրքերով ապա-հովվածությունը 3. Ընթ. հարցեր	1. Ծնողների ցանկությամբ ծնողխորհ.-ի կազմը մնաց նույնը: 2. Նշվեց,որ բոլոր աշակերտներն էլ ստացել են դասագրքերը: 3. Խոսվեց կարգապահության և այլ հարցերի շուրջ:	Ներկա էին բոլոր ծնողները: